Հաստատում եմ՝

<<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>>

պետական բժշկական քոլեջի

տնօրինության խորհրդի նախագահ՝

_____ Ռ. Սարգսյան

12 սեպտեմբերի 2025թ

/01 հունիսի 2022թ. հաստատված, 2023թ. փոփոխված կարգի փոփոխություն/

<<ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ>>

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ, ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը կարգավորվում է ուսանողի գիտելիքների ստուգման, կիսամյակային (տարեկան), փոխադրական քննությունների, ստուգարքների և քննություրնների անցկացման, ինչպես նաև դրանց արդյունքների բողոքարկման, վերահանձման գործընթացը:

1.2. Կարգը կազմելիս հիմք են ընդունվել «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի կանոնադրությունը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի ուսանողների գիտելիքների, կարողությունների, ուսումնառության արդյունքների ընթացիկ, կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատականների ձևավորման, ուսանողների տարեկան առաջադիմության ձևավորման կարգի, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի «Ուսանողների ներքին կարգապահական կանոնները», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջի ուսանողների բացակա ժամերի լրացման կարգը:

1.3. Սույն կարգը տնօրենի ներկայացմամբ հաստատում է տնօրինական խորհուրդը: Այն գործունեության մեջ է մտնում տնօրենի հրամանի համաձայն: Կանոնակարգում փոփոխությունները կատարվում են նույն կարգով:

1.4. Կարգը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը անց է կացվում կիսամյակի ընթացքում՝ բացահայտում է ուսանողների պատրաստվածության աստիճանը մոդուլներից և առարկաներից, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը:

2.2. Ստուգարքները և քննությունները ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի, դասընթացի որոշակի բաժնի (բաժինների) յուրացման մակարդակի ստուգումն ու գնահատումն է:

2.3 Ուսումնական պլանով սահմանված ստուգարքների ընդունումը կազմակերպվում է ըստ սահմանված ժամանակացույցի՝ կիսամյակի ընթացքում տրված գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման արդյունքների հիման վրա, ստուգարքները լինում են նաև տարբերակված, որոնք գնահատվում են:

Ստուգարքը հանձնել/չհանձնելու դեպքում ստուգման գրքույկում կատարվում է նշում՝ ‹‹ստուգված››/‹‹չստուգված›› կամ գնահատված թվանշանը:

2.4. Կիսամյակային (տարեկան) քննությունը ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանի ամփոփումն ու գնահատումն է:

Ուսանողը պարտավոր է բոլոր քննությունները և մոդուլները հանձնել ուսումնական պլաններին համապատասխան: Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով (հիմնավորված փաստաթղթերով) սահմանված ժամկետում ստուգարքները, քննությունները և մոդուլները չհանձնած ուսանողների համար սահմանվում ստուգարքների և քննությունների և մոդուլների հանձման անհատական ժամանակացույց:

Ուսանողին չի թույլատրվում մասնակցելու քննության, եթե տվյալ քննական առարկայի, մոդուլի կիսամյակը չի ամփոփվել դրական գնահատականով: Քննական առարկայի, մոդուլի կիսամյակային գնահատականը անբավարար լինելու դեպքում՝ ուսանողին թույլատրվում է վերահանձնելու այն, եթե նա սահմանված կարգով վերացնում է կիսամյակի անբավարար ամփոփ գնահատականը:

2.5. Քննությունն ուսումնական պլանի պահանջներին համապատասխան որևէ ուսումնական առարկայից/մոդուլից կամ նրա առանձին բաժնից սովորողների գիտելիքների ամփոփիչ ստուգումն ու վերջնական գնահատումն է: Այն անց է կացվում դասախոսի կամ հանձնաժողովի կողմից: Քննությունները նպատակ ունեն գնահատելու ուսանողի տեսական գիտելիքները, նրա ստեղծագործական մտածողության ունակությունը, ձեռք բերած ինքնուրույն աշխատանքի կարողությունները, ստացած գիտելիքները համադրելու և այն գործնական խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունը:

2.6. Քննությունների անցկացման ձևը՝ բանավոր, գրավոր, թեստավորում և այլն, սահմանվում է ուսումնական պլանով: Քննությունները լինում են կիսամյակային, փոխադրական ինչպես նաև ավարտական՝ ամփոփիչ ատեստավորման ձևով: Ավարտական քննությունների անցկացման կարգը սահմանում է կրթության պետական լիազոր մարմինը:

2.7. Կիսամյակային և փոխադրական քննությունները անցկացվում են ուսումնական պլաններով սահմանված քննաշրջանների ժամանակ, ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան,ուսումնական մասի կազմած և տնօրենի կողմից հաստատած ժամանակացույցով:

2.8. Քննությունից առնվազն մեկ ամիս առաջ դասախոսի կողմից կազմվում է հարցաշար, քննարկվում և հավանության է արժանանում ամբիոնի /ուսումնամեթոդական խորհրդի/ նիստում և ներկայացվում ուսումնական մաս:

2.9. Քննությունից 2 շաբաթ առաջ, ըստ հարցաշարի, դասախոսը կազմում է քննական տոմսերը:

Քննական տոմսերի բովանդակությունը,կառուցվածքը, քանակը քննարկվում և հավանության է արժանանում ամբիոնի, ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստում՝ քննությունից առնվազն 2 շաբաթ առաջ: Քննական տոմսերը հաստատում է ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը;

2.10. Քննությունից առնվազն մեկ ամիս առաջ հարցաշարը տրամադրվում է ուսանողներին:

2.11. Քննությունների ժամանակացույցը, քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ փակցվում է քոլեջի քննական տախտակին: Քննությունների միչև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 2 օր:

2.12. Քննության ներկայանալիս ուսանողները պարտավոր են իրենց հետ ունենալու ստուգման գրքույկ, որը քննությունից առաջ ներկայացվում է քննող դասախոսին:

2.13. Քննություններն ընդունում են տվյալ առարկաների դասախոսները: Եթե միևնույն առարկայի տեսական և գործնական պարապմունքները դասավանդվում են տարբեր դասախոսների կողմից, ապա քննությունը կարող է անցկացվել դասավանդողների մասնակցությամբ: Դասախոսների աշխատաժամանակը ներառում է քննության անցկացումը:

2.14. Քննության օրը դասախոսը ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենից ստանում է քննական տեղեկագիրը և քննական նյութերը/ քննական տոմսերը/: Քննության ավարտից անմիջապես հետո դասախոսը քննական տեղեկագիրը ներկայացնում է ուսումնական մաս :

2.15. Քննությանը կարող են ներկա գտնվել քոլեջի տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, ամբիոնի վարիչը: Քննությունների անցկացման ժամանակ քննասենյակում այլ անձանց ներկայությունը արգելվում է առանց տնօրենի թույտվության:

2.16. Փաստաթղթով հիմնավորված, հարգելի պատճառով սահմանված ժամկետներում ստուգարքին և/կամ քննություններին չմասնակցած ուսանողները կարող են դրանք վերահանձնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ պետական բժշական քոլեջի ուսանողների ակադեմիական պարտքերի վերահանձման» կարգի համաձայն:

2.17. Քննությունը գնահատվում է 10 միավորային սանդղակով:Քննության գնահատման սանդղակը և բնութագիչները սահմանվում են ըստ հավելված 1-ի :

2.18. Քննության չներկայանալը նշվում է քննական տեղեկագրում՝ «Չի ներկայացել»: Դրական գնահատականները անց են կացվում քննական տեղեկագիր և ստուգման գրքույկ, իսկ անբավարար գնահատականները միայն քննական տեղեկագիր:

2.19. Փոխադրական քննություն անց է կացվում «Քույրական գործ» մասնագիտության երկրորդ կուրսի ավարտին «Քույրական գործի հիմունքներ» առարկայից:

2.20. Փոխադրական քննության հարցաշարը և հարցատոմսերը կազմվում են սույն կարգի 2.9-2.11 -րդ կետերին համապատասխան:

2.21. Փոխադրական քննության անցկացման նպատակով քոլեջի տնօրենի հրամանով ստեղծվում է քննական հանձնաժողով:

3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ

3.1. Ակադեմիական պարտք է համարվում կիսամյակի արդյունքներով որևէ առարկայական դասընթացի /մոդուլի/ համար ստուգարք չհանձնելը, չգնահատվելը կամ անբավարար գնահատվելը:

Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում՝

- կիսամյակի արդյունքով 3-ից ավելի ակադեմիական պարտք ունենալը,

- մինչև 3 ակադեմիական պարտքերի՝ վերաքննական շրջանում կրկնակի վերահանձնումներից անբավարար կամ չստուգված /չգնահատված/ ստանալը:

3.2. Ուսանողները իրավունք ունեն ակադեմիական պարտքերը վերահանձնել հետևյալ դեպքերում.

- մինչև 3 առարկայից կիսամյակային անբավարար գնահատական ունենալու կամ ստուգարք չհանձնելու դեպքում:

- ստուգարքին կամ քննությանը չներկայանալու դեպքում :

- բացակայությունների պատճառով 3-ից ավելի կիսամյակային առարկաները չգնահատված լինելու դեպքում՝ տնօրենի ներկայացմամբ, մանկավարժական խորհրդի որոշումով /հատուկ դեպքերում, երբ ուսանողը օբյեկտիվ պատճառներով բացակայությունները չի կարողացել լրացնել սահմանված կարգի համաձայն/:

3.3. Մինչև 3 առարկայից կիսամյակային անբավարար գնահատական ունեցող ուսանողը թույլատրվում է սեսիոն քննությունների, եթե այդ առարկաները քննական չեն:

3.4. Քննաշրջանի կամ մոդուլների ամփոփման ընթացքում միայն մեկ քննական առարկայից պարտք ունեցող ուսանողը իրավունք ունի փոխտնօրենին ուղղված դիմումի համաձայն այն վերահանձնել «բաց դռների» օրը, որը հաջորդում է քննաշրջանին և տևում 5 աշխատանքային օր:

3.4.1. Բողոքարկման և վերահանձնման համար ուսանողը դիմում է ներկայացնում քոլեջի տնօրենին վերաքննական շրջանից առաջ մեկ շաբաթվա ընթացքում:

3.5. Ուսանողն իրավունք ունի ամբողջ ուսումնառության ընթացքում ամենաշատը երեք առարկաներից, մոդուլներից կիսամյակային քննությունների կամ մոդուլների ամփոփման գնահատումներով ստացած «բավարար» և «լավ» գնահատականները բողոքարկել, վերահանձնել կիսամյակին հաջորդող վերաքննական շրջանում:

3.5.1 Ուսումնառության վերջին կիսամյակում վերահանձնումներ չեն թոսույլատրվում: Միջնակարգ կրթության հանրակրթական պետական ավարտական քննությունները վերահանձնման ենթակա չեն:

3.5.2. Տնօրենի հրամանով ստեղծվում է վերաքննական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝ որպես նախագահ, ամբիոնի վարիչը և դասախոսը՝ որպես անդամներ:

3.5.3 Յուրաքանչյուր ուսանողի տրվում է ուղեգիր, որը վերահանձնումից հետո վերադարձվում և պահպանվում է ուսումնական մասում:

3.5.4 Վերահանձնման գնահատականը ուղեգրում նշվում է դասախոսի կողմից:

3.5.5. Փոխտնօրենը դասամատյանի «Հանրագումարային գնահատականների ամփոփիչ տեղեկագիր» էջում կոտորակով նշում է ամփոփիչ գնահատականը և վերահանձնման գնահատականը:

3.5.6. Տնօրենի կողմից, վերահանձնման վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում, ուսանողը կարող է դիմել և մասնակցել Քոլեջում կազմակերպվող լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին համապատասխան առարկայից:

3.5.7. Վերահանձնման արդյունքում բարձրացված գնահատականները չեն կարող անդրադառնալ փոխատեղման վրա: Անվճար համակարգում սովորող ուսանողը քննությունները վերահանձնելու դեպքում հաջորդ ուսումնական տարին տեղափոխվում է վճարովի համակարգ:

3.5.8. Գնահատականների փոփոխության դեպքում վերահանձնման համար տրված ուղեգիրը՝ դասախոսի ստորագրությամբ և նոր նշանակված գնահատականով կցվում է տվյալ կուրսի ամփոփագրին և քննական տեղեկագրին, համապատասխան նշում է կատարվում ուսանողի ստուգման գրքույկում:

3.6. Ամեն կիսամյակի ավարտից հետո սահմանվում է 2 վերաքննական շրջան /բացառությամբ ավարտական կուրսի վերջին կիսամյակի/ առաջին վերաքննական շրջան, երկրորդ վերաքննական շրջան:

3.6.1. Վերաքննական շրջանները սահմանվում են հաջորդ կիսամյակը սկսելուն հաջորդող մեկ ամսվա ընթացքում՝ տնօրենի հաստատված ժամանակացույցով /ուսումնական գծով փոխտնօրենի ներկայացմամբ/՝ յուրաքանչյուրը տասը աշխատանքային օր տևողությամբ:

3.6.2. 3-րդ վերաքննական շրջան սահմանվում է առանձնահատուկ դեպքերում մանկավարժական խորհրդի որոշմամբ, երբ տարբեր օբյեկտիվ պատճառներով անհնար է լինում առաջին երկու շրջաններում ակադեմիական պարտքերը մարելու հնարավորությունը:

2-րդ և 3-րդ վերաքննական շրջանները անցկացվում են տնօրենի հրամանաով ձևավորված հանձնաժողովի կողմից:

3.6.3. Վերաքննական շրջանների ավարտից հետո անբավարար գնահատական ունեցող ուսանողները հեռացվում են քոլեջից:

3.6.4 Ակադեմիական պարտքերի մարման գործընթացը իրականացվում է վերահանձման գործընթացի սկբունքներով:

3.7. Ուսանողների ակադեմիական պարտքերի մարման կարգի կատարման վերահսկողությունը իրականացնում են տնօրենը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ամբիոնների վարիչները, դասախոսները: